2019, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (548)

Բիւզանդա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Շնորհալոր Ամենայն եւ Սուրբ Ծնունդ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 դեկտեմբերի **Բազմազավակ ընտանիքների Մասիս քաղաքից**

«Ընտանիքի տարվա» շրջանակներում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց բազմազավակ ընտանիքների Մասիս քաղաքից՝ ուղեկցությամբ հոգեւոր հովիվ Արարատ քհն. Օրդոյանի (Արարատյան հայրապետական թեմ), եւ Արմավիր քաղաքից ու շրջակա համայնքներից՝ առաջնորդությամբ Արտակ ավագ քհն. Սիմոնյանի (Արմավիրի թեմ):

Իր հոգու բերկրանքն արտահայտելով բազմազավակ ընտանիքների՝ ամենայն հայոց հոգեւոր կենտրոն այցերի առիթով՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց ուխտագնացության մեծահասակ եւ կրտսեր մասնակիցներին:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ 2019 թվականը հռչակել է «Ընտանիքի տարի», որպեսզի անդրադարձ կատարվի այն արժեքներին, որոնցով հայ ընտանիքն ամուր եւ հզոր է:

Ըստ Հայոց Հայրապետի՝ այդ արժեքները կարելի է ամբողջացնել երկու կարեւորագույն՝ աստվածսիրություն եւ հայրենասիրություն գաղափարների մեջ, որոնց վրա խարսխված՝ յուրաքանչյուր ընտանիքում կգերակայեն սերը, փոխադարձ հարգանքն ու համերաշխության ոգին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տիրոջ Սուրբ Աջը մշտապես հովանի լինի հայ ընտանիքներին, որպեսզի ապրեն Աստծո օրհնության ու լիության մեջ:

15 դեկտեմբերի **Երեխաների աջակցության «Քյուրքչյան» կենտրոնի եւ ՍՕՍ մանկական՝ գյուղերի հավաքական թիմին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մինի ֆուտբոլի 16-րդ միջազգային մրցաշարում (Սանկտ Պետերբուրգ) հաղթանակած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի եւ ՍՕՍ մանկական՝ գյուղերի հավաքական թիմին՝ մարզիչ Անդրանիկ Ղահրամանյանի, «Քյուրքչյան» կենտրոնի տնօրեն Արամ Մկրտիչյանի եւ ՍՕՍ մանկական՝ գյուղերի ներկայացուցիչ Ռուբիկ Փաշինյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, իր ուրախությունը հայտնելով արձանագրված հաղթանակի կապակցությամբ, շնորհավորեց պատանիներին այս նշանակալի ձեռքբերման առիթով: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց տարբեր ոլորտներում միասնական ոգու դրսեւորումը, որի շնորհիվ միայն հնարավոր է հասնել հաջողության, նաեւ փաստեց, որ պատանիների հաղթանակը վկայում է աջակցության կենտրոններում իրականացվող լավ աշխատանքի մասին:

Վերջում Հայոց Հովվապետն իր գնահատանքը հայտնեց մարզչին եւ պատասխանատուներին, իսկ երիտասարդ մարզիկներին մաղթեց նորանոր հաջողություններ:

«Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնում այսօր խնամվում եւ կրթվում է 15 պատանի:

16 դեկտեմբերի **Վաշինգտոնի Սուրբ Գրքի թանգարանի պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վաշինգտոնի Սուրբ Գրքի թանգարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ թանգարանի ցուցահանդեսների գլխավոր համակարգող Ջեֆրի Քլոհայի: Սա պատվիրակության երկրորդ այցն էր Ս. Էջմիածին: Թանգարանը 2021 թվականին ծրագրում է կազմակերպել ցուցահանդես՝ «Աստծո շունչը» խորագրի ներքո՝ նվիրված հայկական Աստվածաշնչին եւ հայ եկեղեցական արվեստին:

Զրույցի ընթացքում հյուրերը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեցին ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքների ընթացքի եւ անհրաժեշտ ցուցանմուշների ձեռք բերման շուրջ պայմանավորվածությունների վերաբերյալ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով Սուրբ Գրքի թանգարանի նախաձեռնությունը, իր գնահատանքը հայտնեց կատարված նախապատրաստական աշխատանքների կապակցությամբ: Նորին Սրբությունը վերահաստատեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատրաստակամությունը՝ զորակցելու նախագծի իրականացմանը եւ Սուրբ Էջմիածնում պահվող որոշ ձեռագիր ու տպագիր Աստվածաշնչերի եւ թանգարանային սրբազան արժեքների տրամադրմամբ հարստացնելու ցուցահանդեսը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի թանգարանների ու արխիվի բաժնի տնօրեն Ասողիկ աբեղա Կարապետյանը:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 1

17 դեկտեմբերի **Արեւելք-Արեւմուտք միջազգային ինստիտուտի նախագահին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արեւելք-Արեւմուտք միջազգային ինստիտուտի (Նյու Յորք, ԱՄՆ) նախագահ եւ գործադիր տնօրեն Ուիլյամ Փարքերին:

Հանդիպմանը պրն Ուիլյամ Փարքերը Նորին Սրբությանը ներկայացրեց ինստիտուտի գործունեության նպատակները եւ կիբերանվտանգության, կանխարգելիչ դիվանագիտության, տնտեսական եւ տարածաշրջանային անվտանգության ոլորտներում կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր անդրադարձ կատարեց Մերձավոր Արեւելքում տիրող ծանր իրավիճակին, քրիստոնյա փոքրամասնությունների խնդիրներին՝ մտահոգություն հայտնելով քրիստոնեական համայնքների նվազման առնչությամբ:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Թուրքիայում կրոնական փոքրամասնությունների կյանքի, ղարաբաղյան հակամարտության ու դրա խաղաղ կարգավորմանն ի նպաստ Հայ Եկեղեցու կողմից ձեռնարկվող քայլերի եւ տարածաշրջանային մի շարք խնդիրների մասին:

Այս կապակցությամբ Գարեգին Երկրորդ Հայրապետը կարեւորեց նաեւ միջազգային հանրության կողմից գործադրվող ջանքերը՝ հանուն մարդկության խաղաղ ու բարօր կյանքի կերտման:

19 դեկտեմբերի **ՀՀ նախագահին եւ վիրավորում ստացած զինվորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Արցախյան ազատամարտում եւ սահմանին մարտական հերթապահություն իրականացնելիս վիրավորված 15 հայորդու:

Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց հայրենյաց պաշտպանների՝ Մայր Աթոռ այցելելու առիթով՝ գոհունակությամբ արձանագրելով, որ նման խիզախ հայորդիների անձնվեր ծառայության շնորհիվ է խաղաղ ու ապահով հայրենիքը:

Վեհափառ Հայրապետը ողջունեց եւ մեծապես կարեւորեց նման նախաձեռնությունները, որոնք նպատակ են հետապնդում արժանին մատուցելու Հայոց բանակի քաջարի զինվորներին, նաեւ հասարակության ուշադրությունը սեւեռելու նրանց խնդիրներին, վիրավորում եւ հաշմանդամություն ստանալուց հետո բնականոն կյանքին վերադառնալու դժվարություններին:

«Մենք սիրում ենք ձեզ եւ բարձր գնահատում: Դուք մեր ժամանակի հերոսներն եք: Դուք ձեր կյանքով, ձեր ընթացքով ու արիությամբ վավերացրել եւ հաստատել եք նաեւ մեր հայրերի կողմից բանաձեւված խոսքը, թե քաջերի որդիները քաջերն են: Դուք մեր նախնյաց քաջ զավակներն եք»,– ասաց Նորին Սրբությունը՝ վկայակոչելով սուրբգրային խոսքը՝ «Ոչ ոք չունի ավելի մեծ սեր, քան այն, որ մեկն իր կյանքը դնի իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13):

Հաստատելով, որ իրենց դրսեւորած հայրենասիրությամբ ու քաջությամբ նրանք լավագույն եւ ուսանելի օրինակն են նորահաս սերնդի համար՝ Հայոց Հովվապետն ընդգծեց, որ ազգը սիրում է իր հերոսներին ու պաշտպաններին եւ մշտապես պատրաստակամ է ըստ ամենայնի զորակից եւ աջակից լինելու Հայոց բանակին:

Նորին Սրբությունը գնահատանքով փաստեց, որ ազատամարտի եւ հայրենիքի սահմանները պաշտպանելու ընթացքում ստացած վիրավորումները չեն ընկճել հայորդիների խիզախ ոգին, եւ վերջիններս լավատեսությամբ, հավատքով շարունակում են իրենց կյանքի ընթացքը՝ տարբեր ասպարեզներում օգտակար ծառայություն բերելով հայ ժողովրդին ու հայրենիքին, իսկ նրանց ընտանիքները հպարտության զգացումով, հայրենանվիրումի բարձր գիտակցությամբ բաժնեկից են նրանց առջեւ ծառացող դժվարություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Աստծո պահպանությունն ու զորակցությունը քաջարի մարտիկներին՝ մաղթելով խաղաղ եւ երջանիկ կյանք:

Այնուհետեւ ներկաներին իր խոսքն ուղղեց Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը:

«Առանց երկմտելու ասում եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը հերոս է: Հերոսները միայն նրանք չեն, ովքեր հերոսի կոչում ունեն, այլ հերոս են՝ ըստ իրենց ապրած կյանքի, իրենց ոգով, այն հերոսական հաղթանակով, որ պարգեւել են մեզ: Դուք բոլորդ հաղթած բանակի զինվորներ եք: Ձեզնից յուրաքանչյուրի ներդրումով է, որ մենք կարող ենք ասել, որ իսկապես ունենք մեր տարածաշրջանի ամենահզոր բանակներից մեկը: Բանակը հզոր է նաեւ իր ոգով: Երբ բանակը կառուցվում էր, ձեր հայրերը եւ պապերը կանգնեցին ի պաշտպանություն հայրենիքի եւ Արցախի ու հաղթեցին: Այդ հաղթանակի ոգին ուղղակիորեն փոխանցվում է հաջորդ սերնդին, այն ուղղակիորեն է փոխանցվել ձեզ՝ այն խորհրդով, որ ստացել եք ձեր ծնողներից, այն ոգով եւ այն ուժեղ կամքով, որ ժառանգել եք ձեր հայրերից, պապերից, մայրերից եւ տատերից: Դուք հայրենիքին տվել եք ձեր կյանքն ու առողջությունը, դուք պայքարել եք կյանքի համար եւ հաղթել եք, անցել եք դժվարությունների միջով եւ ձեր ներսում պահել եք կյանքի հանդեպ հավատը. ձեր կյանքը իմաստավորված է»,– ասաց ՀՀ նախագահը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ նախագահը զրուցեցին հանդիպման մասնակիցների հետ:

Հանդիպումից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայությամբ ՀՀ նախագահի ու վիրավորում ստացած զինվորների, կատարվեց Հանրապետական մաղթանք:

Արարողությանն աղոթք բարձրացվեց առ Աստված՝ հայրենիքի խաղաղության ու անսասանության եւ Հայոց բանակի հաղթական ընթացքի համար:

Տեղի ունեցավ նաեւ ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ նախագահը իրենց բարեմաղթանքները փոխանցեցին քաջարի զինվորներին:

21 դեկտեմբերի **Արարատյան հայրապետական թեմի պատանի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Արարատյան հայրապետական թեմի Երեւանի Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու «Նավասարդ» երիտասարդական միության անդամներին եւ Արցախի հերոս Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցի տարբեր դասարանների աշակերտներին՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Նորայր ավագ քհն. Բաղդասարյանի:

Ազգային արժեքների պահպանման եւ կրթական ոլորտի զարգացման գործում Հայ Եկեղեցու կարեւոր առաքելության վերաբերյալ տեր Նորայրի եւ դպրոցի տնօրեն պրն Գարեգին Ներսիսյանի խոսքերից հետո Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց նման նախաձեռնության կազմակերպման առիթով՝ ուխտավոր հայորդիներին փոխանցելով իր օրհնությունն ու բարեմաղթանքները: Հայոց Հայրապետը կարեւորեց հայորդիների ուխտագնացությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որով հնարավորություն է ընձեռվում նրանց՝ հաղորդակցվելու իրենց անցյալին ու պատմության փառավոր էջերին, զգալու Աստծո շունչը եւ նորոգելու իրենց հավատքը:

Նորին Սրբությունը հաստատեց, որ Ս. Էջմիածնում է հայ ժողովուրդը հավատարմության ուխտ կնքել Աստծո հետ՝ դիմակայելով կյանքի ամենատարբեր փորձություններին ու արհավիրքներին, Քրիստոսի օրինակով հաղթել մահվանը եւ Նրա հանդեպ ունեցած անսասան հավատքով ու սիրով կերտել հոգեւոր եւ մշակութային գլուխգործոցներ: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ հայրերը Եկեղեցու միջոցով են իրենց լավագույն արարումներն ընծայաբերել Աստծուն, ինչը վառ վկայություն է առ Աստված նրանց զորավոր հավատքի: Ըստ Նորին Սրբության՝ հայ ժողովուրդն իր այդ զորեղ հավատքով ու աստվածասեր ընթացքով է ապահովել այլ ազգերի հարգանքն ու պատկառանքն իր հանդեպ՝ օրինակ դառնալով նաեւ շատ ժողովուրդների համար:

Գարեգին Երկրորդ Հայրապետը հույս հայտնեց, որ ուխտավոր հայորդիներն այդ հզոր ու գեղեցիկ ժառանգության տերը կլինեն՝ հարստացնելով այն արժեքավոր նոր իրագործումներով: Նորին Սրբությունը նաեւ հորդորեց դպրոցականներին լավագույնս սերտել եւ յուրացնել իրենց պատմությունը: *«Դուք մեր կյանքի եւ հայ ժողովրդի շարժող ուժն եք: Դուք մեր ապագան եք»,–* ասաց Հայոց Հովվապետը՝ վերստին փոխանցելով երիտասարդներին իր օրհնությունն ու գալիք Ամանորի առիթով լավագույն բարեմաղթանքները:

Հանդիպման ընթացքում աշակերտները ասմունքով, ժողովրդական երգերի եւ երաժշտական կատարումներով հաճելի անակնկալ մատուցեցին Վեհափառ Հայրապետին:

Կոտայքի թեմի բազմազավակ ընտանիքներին

«Ընտանիքի տարվա» շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հրազդան եւ Ծաղկաձոր քաղաքներից ժամանած բազմազավակ ընտանիքների՝ ուղեկցությամբ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանի:

Հայցելով Նորին Սրբության օրհնությունը բազմազավակ ընտանիքների համար՝ Առաքել սրբազանն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին մշտապես եղել է ընտանեկան արժեքների պահապանն ու քարոզիչը՝ ուժեղ եւ ամուր ընտանիքը հզոր պետականության հիմք նկատելով:

Իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ուխտավորներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ ընտանիքը հասարակության արժեհամակարգի եւ լուսավոր ապագայի հիմքն է: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ առողջ եւ արատավոր երեւույթներից զերծ հասարակություն ունենալու համար անհրաժեշտ է, որ ընտանիքը հաստատվի քրիստոնեական արժեքների եւ բարոյականության վրա, ուր պետք է գերիշխեն փոխադարձ հարգանքն ու սերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը փաստեց, որ հայ ընտանիքները մշտապես ապրել են քրիստոնեական հավատքով ու արժեքներով, հայ ծնողները նախանձախնդրորեն հետեւել եւ կյանքի են վերածել իրենց սուրբ հայրերից փոխանցված հոգեւոր արժեքները՝ կերտելով հայ քրիստոնյայի իրենց նկարագիրը: Հայոց Հովվապետի խոսքի համաձայն՝ այս ճանապարհով է, որ հայ ժողովուրդը պիտի լինի հզոր եւ գոյատեւի դարերի բարդ հոլովույթներում, այդ ոգին, նկարագիրը եւ հայորդիներին բնորոշ զորեղ հավատքն են եւ նույն հավատքով իր կյանքն արարելու վճռականությունն է, որ ուժ են տալիս հայ ժողովրդին ապրելու եւ ստեղծագործելու:

Գարեգին Երկրորդ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ հայորդիների ուխտագնացությունն ամենայն հայոց հոգեւոր կենտրոն վկայում է նրանց հավատի, սիրո եւ սրբությունների ու հոգեւոր ժառանգության հանդեպ ունեցած իրենց նախանձախնդրության մասին: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ այցելությունը Ս. Էջմիածին անջնջելի հետք կթողնի ընտանիքների բոլոր անդամների վրա՝ ներշնչելով նրանց նոր արարումների՝ հանուն հայրենիքի եւ Մայր Եկեղեցու:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ հորդորեց ուխտավոր հայորդիներին հավատարիմ մնալ ընտանեկան ավանդական արժեքներին, հետեւել Քրիստոսի կենարար պատգամներին, ապրել հավատքով եւ առ Աստված սիրով, որպեսզի իրենց ընտանեկան հարկերում անպակաս լինի Աստծո օրհնությունը:

Վերջում Նորին Սրբությունն ուխտավորներին ընծայեց փոքրիկ խաչեր:

Շարունակությունը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունել է ԱՄՆ Սենատի բանաձեւը Հայոց ցեղասպանության վերաբերյալ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունել է դեկտեմբերի 12-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման բանաձեւի ընդունումը:

«Գոհունակությամբ տեղեկացանք ԱՄՆ Սենատի այս վճռական քայլի մասին, որը կարեւորագույն հանգրվան է եղեռնահար մեր ժողովրդի նկատմամբ պատմական արդարության վերականգնման պայքարում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական մեր գնահատանքն ենք բերում ԱՄՆ Սենատի անդամներին եւ բանաձեւը հեղինակած սենատորներին, որոնք իրենց արդարամիտ կեցվածքը դրսեւորեցին ի նպաստ հայ ժողովրդի ու ի շահ Հայոց ցեղասպանության ծանր հետեւանքների հաղթահարման՝ բացելով մեր պահանջատիրության պատմական նոր էջը:

Մենք ողջունում ենք նաեւ ազգային բոլոր մեր հաստատությունների եւ նվիրյալ անհատների տասնամյակների ազգանվեր աշխատանքը՝ Մեծ եղեռնի միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ, եւ քաջալերում նրանց այս պատասխանատու հանձնառությունը: Մեծ աշխատանք ունենք անելու մեր ազգային իղձերին հասնելու ճանապարհին:

Մեր աղոթքն է, որ Աստված խաղաղության մեջ պահի համայն մարդկության կյանքը՝ զերծ Հայոց ցեղասպանության նման ողբերգություններից ու արհավիրքներից՝ հանուն բոլոր ժողովուրդների հաշտ ու համերաշխ ապագայի»,– նշել է Վեհափառ Հայրապետը:

Շիրանշանների հանձնման արարողություն Մայր Աթոռում

Դեկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանների հանձնման արարողություն:

Նորին Սրբությունը, ի գնահատություն հայրենի երկրի եւ հայ ժողովրդին մատուցած բազմարդյուն ծառայությունների, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան հանձնեց Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, խմբավար Դավիթ Ղազարյանին, Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն, պ. գ. դ. Կարեն Մաթեւոսյանին, ճարտարապետ Գագիկ Գյուրջյանին, իսկ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի բժիշկ, բ. գ. թ., դոցենտ Դոնարա Էլոյանին շնորհվեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան:

Արարողությունը բացվեց Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանի խոսքով:

Մեծարյալների գնահատարժան ծառայություններին ու վաստակաշատ գործունեությանն անդրադարձան աստղաֆիզիկոս, տոմարագետ, ֆ. գ. թ. Գրիգոր Բրուտյանը, բ. գ. դ., պրոֆեսոր Ավիկ Իսահակյանը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, պրոֆեսոր Արզաս Ոսկանյանը եւ «Իզմիրլյան» ԲԿ-ի պրոկտոլոգիայի բաժանմունքի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Արամ Հակոբյանը:

Այնուհետեւ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնդակներն ու շքանշանները: Պարույր քհն. Ավետիսյանը մեծարյալներին ուղղված կոնդակներից ընթերցեց հատվածներ:

Տիար Դավիթ Ղազարյանին ուղղված կոնդակում մասնավորաբար նշված է. *«Այսօր ուրախ առիթ ունենք անդրադառնալու երաժշտարվեստի ասպարեզում Ձեր արդյունավոր վաստակին: Երկար տարիներ պատասխանատու պաշտոններ ստանձնելով ու մանկավարժական առաքելություն իրականացնելով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Դուք Ձեր անմնացորդ ջանքերն եք ներդրել ի նպաստ բուհի շնորհակալ գործունեության՝ ծառայելով երաժիշտների նոր սերնդի պատրաստության նվիրական գործին:*

Դուք հաջողությամբ կազմակերպել եք երաժշտական բազմաթիվ մրցույթներ ու փառատոներ, ղեկավարել երգչախմբեր, կարեւոր հանձնառություններով մասնակցություն բերել մեր երկրում իրականացվող մշակութային նշանակալի միջոցառումներին: Ձեր բազմազբաղ գործունեությանը զուգընթաց հեղինակել եք նաեւ գիտական հոդվածներ, գիտամեթոդական ուսումնասիրություններ, կազմել խմբերգային ժողովածուներ, որոնք գնահատանքով են ընդունվել մասնագետների կողմից:

Ձեր հարուստ փորձառությունն ու կարողությունները սիրով ծառայեցրել եք նաեւ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի գործունեությանը՝ որպես կառավարման խորհրդի անդամ: Այսօր Ձեր շուրջ կեսդարյա մասնագիտական վաստակը գնահատված է գիտական բարձր կոչումներով, բազմաթիվ մրցանակներով ու պարգեւներով»:

Պրն Կարեն Մաթեւոսյանին ուղղված հայրապետական կոնդակում ասվում է. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ձեր գործունեության տարիներից ճանաչում ենք Ձեզ եւ տեղյակ ենք Ձեր գիտական ու ստեղծագործական երկարամյա գործունեությանը: Ուրախ ենք, որ ղեկավարելով Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արվեստի պատմության եւ գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժինը՝ Դուք կարեւոր նպաստ եք բերում մեր երկրում հայագիտության զարգացմանը: Որպես հայագետ-աղբյուրագետ՝ գիտական գործունեության ընթացքում Դուք ուսումնասիրել եք հայագիտության ու հայ արվեստի պատմության բազմաթիվ էջեր, հեղինակել տասնյակ գրքեր ու գիտական արժեքավոր հոդվածներ:*

Շարունակությունը՝ էջ 5

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սկիզբը՝ էջ 2

25 դեկտեմբերի **Շիրակի թեմի առաջնորդին եւ ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների, թեմի տարբեր համայնքների ներկայացուցիչներ: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը Միքայել սրբազանին հանձնեց արքության պատվի՝ հայրապետական սրբատառ կոնդակը: Դեռեւս ս. թ. փետրվարի 26-ին՝ Ս. Ղեւոնդյանց քահանաների տոնին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սրբազանին շնորհվել էր արքության պատիվ՝ Հայոց Եկեղեցու անդաստանում անմնացորդ ծառայության եւ տարիների վաստակի համար:

Հանդիպումն սկսվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Ողջունելով Գյումրու եւ Շիրակի հավատավոր հայորդիների ներկայությունը՝ Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ առաջնորդ Միքայել սրբազանի կյանքին եւ Հայ Եկեղեցու անդաստանում նրա բազմամյա բեղուն գործունեությանը: Ըստ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Միքայել սրբազանն իր առաջնորդական ծառայության ընթացքում ծավալել է արդյունավոր գործունեություն՝ թեմի քարոզչական, կրթական եւ եկեղեցաշինական ոլորտներում: Հայոց Հովվապետը հաստատեց, որ Միքայել արքեպիսկոպոսը հովվի եւ առաջնորդի բարձր գիտակցությամբ եղել է թեմի բոլոր՝ գործող եւ չգործող, կանգուն եւ խոնարհված եկեղեցիներում՝ մեկտեղելով հայորդիներին եւ լծվելով սրբավայրերի շուրջ հոգեւոր կյանքի աշխուժացման առաքելությանը:

Նորին Սրբությունը նաեւ նշեց, որ շիրակցիների հետ շփումների ժամանակ ականատես է եղել հոգեւոր եւ ազգային արժեքների նկատմամբ նրանց նախանձախնդրությանը, խոր հավատքին, հոգեւորականների հանդեպ պահանջկոտությանը: Հայոց Հայրապետը շիրակցիներին մաղթեց Սուրբ Հոգու առաջնորդությունը եկեղեցաշեն, հայրենաշեն եւ ազգանվեր առաքելության մեջ:

Այնուհետեւ Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանն ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որում մասնավորապես ասված է.

«Սիրելի՛ Սրբազան, Մայր Աթոռիս Հոգեւոր ճեմարանում ամբողջացնելով հոգեւոր Ձեր ուսումնառությունը, շուրջ երեք տասնամյակ առաջ Միածնի Իջման Ս. Սեղանի առջեւ մարմնի ու հոգու ծնրադրությամբ ուխտ կնքեցիք Բարձրյալ Տիրոջ հետ՝ որպես կուսակրոն եկեղեցական Ձեր կարողություններն անձնվիրաբար ի սպաս բերելու Կենաց Խոսքի քարոզչությանը:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի տնօրինությամբ ծառայության կոչվեցիք Եղեգնաձորի Ս. Խաչ եւ Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ պատմական վանքերում, ապա տարբեր հանձնառություններ ստանձնեցիք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ ամենայն նախանձախնդրությամբ իրականացնելով Ձեր առաքելությունը եւ հոգեւոր սնունդ ջամբելով մեր ժողովրդի հավատավոր զավակներին:

Ձեր եկեղեցանվեր վաստակի բարձր գնահատանքով Մենք Ձեզ կոչեցինք Շիրակի թեմի առաջնորդի պաշտոնին եւ արժանացրեցինք եպիսկոպոսության բարձր կոչման՝ վստահությամբ, որ նոր ու առավել պատասխանատու հանգամանքի մեջ պիտի հաջողեք մշտարթուն ծառայությամբ հավելել պայծառությունը մեր Ս. Եկեղեցու: Մենք ուրախ ենք մեծապես, որ Ձեր առաջնորդության տարիներին թեմում համալրվել է հոգեւոր դասը, կառուցվել ու նորոգվել են բազում եկեղեցիներ, ընդլայնվել է քարոզչական գործունեությունը՝ ի նպաստ Շիրակ աշխարհի Մեր սիրեցյալ զավակների հոգեւոր կյանքի նորոգության»:

Հայրապետական կոնդակի հրապարակումից հետո Նորին Սրբությունն այն փոխանցեց Միքայել սրբազանին, ինչպես նաեւ այս առիթով սրբազանին ընծայաբերեց եպիսկոպոսական պանակե:

Հանդիպմանը ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից հրապարակվեց Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Միքայել սրբազանի առաջնորդության 20-ամյակի եւ արքության պատվի արժանանալու առիթով:

Ապա երախտագիտության խոսքով հանդես եկավ Շիրակի թեմի առաջնորդ սրբազանը: Միքայել արքեպիսկոպոսը, իր շնորհակալությունը հայտնելով Նորին Սրբությանն արքության պատվին արժանացնելու համար, ընդգծեց, որ այս հանգրվանն առիթ է նորոգելու իր ուխտն Աստծո, Հայ Եկեղեցու, հայրենիքի, Մայր Աթոռի եւ նրա գահակալի հանդեպ: Առաջնորդ սրբազանը նշեց նաեւ, որ արքության աստիճանի շնորհումն առավել պարտավորեցնում է իրեն ամենայն նախանձախնդրությամբ շարունակելու իր հոգեւոր ծառայությունը տիրախնամ Շիրակի թեմում, նրա հավատավոր զավակներին եւ հայրենիքին: Սրբազանն անդրադարձավ նաեւ ապագայի ծրագրերին, որոնց թվում կարեւորությամբ ընդգծեց 2020 թվականին թեմի 100-ամյակի տոնախմբման միջոցառումները:

Ուրախալի այս առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաեւ Շիրակից ժամանած հայորդիները՝ վերստին Միքայել արքեպիսկոպոսին ուղղելով շնորհավորական բարեմաղթանքները:

Սարկավագական ձեռնադրություն Ս. Ստեփանոսի տոնին

Դեկտեմբերի 24-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ շուքով նշեց Ս. Ստեփանոս Նախավկայի օրը, որը նաեւ Եկեղեցու անդաստանում ծառայող սարկավագների տոնն է:

Նախօրեին՝ դեկտեմբերի 23-ի երեկոյան, Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Բ լսարանի 3 սան ստացավ դպրության աստիճան, ճեմարանի Դ լսարանի 12 եւ քահանայից պատրաստության լսարանի 4 սան՝ ուրարակրության աստիճան, իսկ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի 26 սան՝ կիսասարկավագության աստիճան:

Տոնին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանի ձեռամբ սարկավագական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 26 սան:

Պատարագի ընթացքում՝ ձեռնադրության ավարտին, սրբազան հայրը, անդրադառնալով Ս. Ստեփանոսի կերպարին ու նահատակության պատմությանը, ի մասնավորի նշեց. *«Ս. Ստեփանոսի նահատակության հրաշալի դրվագը եւ նրա զղջացող, բարի, ողորմած կերպարը միշտ մեր սրտերի մեջ են եղել: Այսօր էլ, երբ փորձում ենք անդրադառնալ, ապա տեսնում ենք, որ Ստեփանոսն առաջին նահատակը եղավ, նրանից հետո՝ հարյուրներ ու հազարներ: Եվ միշտ մտածում ենք՝ որքան նրանք սիրեցին Քրիստոսին, որքան կարողացան հետեւել Նրա ճշմարիտ խոսքին, որ նախընտրեցին մահը, քան ապրել առանց Քրիստոսի: Միշտ մտածում ենք, թե ինչպիսին է մարդը, որ որոշում է կայացնում կամավոր նահատակվելու հանուն հավատքի: Այո՛, մենք նաեւ այդպես պատրաստ ենք լինում կամավոր նահատակության՝ հանուն մեր երկրի, հանուն մեր հավատքի, հանուն մեր Ս. Էջմիածնի ու քրիստոնեական կրոնի: Եվ սրա համար մարդկային շատ բարձր գիտակցություն է հարկավոր, ինչն իր մեջ ուներ հենց ինքը՝ Ս. Ստեփանոս Նախավկան»:*

Շնորհավորելով նոր ձեռնադրված սարկավագներին՝ Վազգեն եպիսկոպոսն ասաց. *«Ձեր կյանքի ողջ ընթացքում հանկարծ երբեք չսասանվե՛ք: Այս կոչումը, որ ստացաք, անարատ պահ՛ք, ապրե՛ք ս. Ստեփանոս Նախավկայի կերպարով եւ ամբողջ զորությամբ աղոթե՛ք Աստծուն եւ խնդրե՛ք սրբի բարեխոսությունը, եւ Ձեզ կտրվի ամեն բան: Սարկավագները մեր Եկեղեցու կարեւորագույն սպասավորներից են: Նրանք բարեջան ծառայություն են իրականացնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, մեր թեմերում, Հայոց բանակում, շատ-շատ տեղերում՝ հոգեւոր խնամք տանելով մեր հավատացյալ ժողովրդին»:*

Սրբազանը, իր շնորհավորանքներն ուղղելով սարկավագների ծնողներին՝ տոնի խորհրդի կապակցությամբ, հաստատեց, որ նրանք սրտի թրթիռով են սպասել այս օրվանը եւ գեթ մեկ անգամ չեն ափսոսել՝ իրենց զավակներին Աստծո սուրբ սեղանի սպասավորությանը նվիրելու համար:

Վազգեն սրբազանը ձեռնադրության առիթով շնորհավորեց նաեւ Պատարագի արարողությանը ներկա Ամենայն Հայոց Հայրապետին՝ մաղթելով նրան կյանքի արեւշատ տարիներ եւ անսասան հովվապետություն:

Ս. Պատարագի ավարտին եկեղեցականաց դասը եւ ներկա բարեպաշտ ժողովուրդը հնարավորություն ունեցան նաեւ համբուրելու տոնի առիթով Մայր տաճարի ավանդատուն-թանգարանից Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի բերված ս. Ստեփանոսի մասունքակիր աջը եւ ստանալու դրանից բխող օրհնությունը:

Նույն օրը, Ս. Ստեփանոս Նախավկայի տոնի առիթով, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի 76 միաբան սարկավագներին եւ նույն սարկավագական աստիճանի արժանացած 26 նորընծաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Մեսրոպ վրդ. Պարսամյանի:

Սարկավագաց դասը Հայոց Հովվապետին ողջունեց «Ստեփանոս, քաղցրիկ տատրակ» տաղի երգեցողությամբ, ապա միասնական՝ Տերունական աղոթքից հետո Վազգեն եպիսկոպոսը շնորհավորեց Վեհափառ Հայրապետին եւ ներկա կրտսեր եկեղեցականներին՝ տոնի եւ նոր սարկավագների ձեռնադրության կապակցությամբ: Սրբազանը մաղթեց սարկավագներին ապրել, գործել եւ ծառայել ս. Ստեփանոսի նախանձախնդրությամբ՝ հավատարիմ մնալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ նրա գահակալին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սարկավագաց դասին փոխանցեց իր հայրական պատգամն ու օրհնությունը: Շնորհավորելով նորաթուխ սարկավագներին՝ Նորին Սրբությունն ուրախությամբ փաստեց, որ նրանք գալիս են համալրելու Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Խոսելով ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի մասին՝ Ամենայն Հայոց Հայրապետը նշեց, որ սարկավագության տարիներին սուրբն իր համար ծառայության օրինակ էր: Նորին Սրբությունն արձանագրեց, որ Քրիստոսի Ավետարանը քարոզելիս նա եղավ առաջին նահատակը, որն իր կյանքը զոհաբերեց հանուն իր Վարդապետի՝ Քրիստոսի, եւ Նրա բերած այն վարդապետության, որի հանդեպ ուներ բացարձակ հավատ: *«Երբեմն չենք անդրադառնում այն կարեւոր բեկումնային առաքելությանը, որ սուրբ Ստեփանոսն ունեցավ քրիստոնեական վարդապետության մեջ. եղավ առաջինը, որ նահատակությամբ նախանշեց հաղթության ճանապարհը: Նրան հետեւեցին մյուսները՝ առաքյալներ եւ Քրիստոսի այլ վկաներ»,–* ասաց Վեհափառ Հայրապետը:

Ըստ Նորին Սրբության՝ ս. Ստեփանոսը չուներ տարակուսանք, երկմտանք ու երկյուղ, եւ նրա անձի մեջ դրսեւորվեցին երկու մեծագույն արժեքներ՝ նվիրում եւ քաջություն, որոնք անհրաժեշտ են հոգեւարականի համար հոգեւոր առաքելության ճանապարհին: Հայոց Հովվապետը հաստատեց, որ առանց սիրո եւ այդ արժեքների առկայության մարդը չի կարող քաջաբար ապրել, խիզախ լինել եւ զոհողությունների գնալ: *«Չգտեք նմանվել սուրբ Ստեփանոսին եւ ապրել այդ արժեքներով»,–* խրատեց Նորին Սրբությունը՝ հորդորելով սարկավագներին ներշնչվել Ստեփանոսի կերպարով, ապրել նրա կյանքի օրինակով, առաջնորդվել վերոնշյալ արժեքներով:

Հանդիպմանը Գարեգին Երկրորդ Վեհափառն իր գնահատանքը հայտնեց ձեռնադրող սրբազանին, ինչպես նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նախորդ եւ ներկա տեսուչներին, տեսչության անդամներին ու դասախոսներին՝ սաներին կրթելու, դաստիարակելու եւ նրանց հոգեւոր աստիճան ստանալու մեջ մեծ ներդրում ունենալու համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գնահատանքը, աղոթքն ու օրհնությունը հղելով սարկավագներին՝ իրենց լուսավոր տոնի կապակցությամբ, հայցեց Բարձրյալից, որ Իր առատաբուխ շնորհները հեղի սարկավագաց դասի վրա: Հայրապետը մաղթեց, որ ս. Ստեփանոսի օրինակն ու բարեխոսությունը զորացնեն նրանց՝ քաջությամբ եւ նվիրումով իրենց անսակարկ ծառայությունը բերելու Հայ Եկեղեցուն, ժողովրդին եւ հայրենիքին:

Տոնի կապակցությամբ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը սարկավագներին գրքեր ընծայեց:

Էվթանազիայի բարոյական եւ կրոնական ընկալումները

Սկիզբը՝ թիվ 22

Ինչ է էվթանազիան

Էվթանազիայի հիմնախնդիրը սերտորեն կապված է մարդու կյանքի իրավունքի հետ: Համաձայն «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որեւէ գործողությամբ եւ միջոցներով: Այն անձինք, որոնք հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետությունում ինքնասպանությունը պատասխանատվություն չառաջացնող արարք է: Ինքնասպանությունն այլ անձի միջոցով իրականացնելը վերջինիս համար առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված կարգով: Այն համարվում է մեկ ուրիշին ապօրինաբար կյանքից զրկել, այն է՝ հասարակ սպանություն (հ. 104): Էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որեւէ գործողությամբ եւ միջոցներով, արգելված է: Պասիվ էվթանազիան ներկայումս թույլատրվում է ավելի քան քառասուն երկրում: Ակտիվ էվթանազիան օրենսդրորեն թույլատրվում է, օրինակ, Հոլանդիայում 2000 թ. եւ Բելգիայում 2002 թ., որով քրեական պատասխանատվությունից ազատվում են այն բժիշկները, որոնք օգնում են անհույս, ծանր, անբուժելի հիվանդներին հեռանալ կյանքից. «հիվանդը պետք է կրի անտանելի ցավեր, որոնք հնարավոր չէ մեղմել, նա պետք է անձամբ, ինքնակամ խնդրի բժշկին օգնելու իրեն մահանալ, իսկ վերջինս իր հերթին պարտավոր է խորհրդակցել նաեւ մեկ այլ՝ անկախ մասնագետի հետ, յուրաքանչյուր նման դեպքում պետք է հաղորդի իշխանություններին՝ ոչ բնական մահվան մասին»: Այսպիսով՝ այս երկրներում քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն օրենքով սահմանված էվթանազիայի կանոնների խախտման դեպքում: Ակտիվ էվթանազիան օրինականացրել է նաեւ ԱՄՆ-ի Օրեգոն նահանգը, որտեղ այն թույլատրվում է իրականացնել մահացու հիվանդների նկատմամբ, որոնք գտնվում են հիվանդության վերջին փուլում: Երկրների մեծ մասում ակտիվ էվթանազիան արգելված է քրեական պատասխանատվության ենթարկելու ուժով: Տարբեր երկրներում այս երեւույթի նկատմամբ առկա իրավաբանական հակասական գնահատականը պայմանավորված է բժշկական, բարոյաէթիկական, փիլիսոփայական, կրոնական հայացքների առանձնահատկություններով եւ պատմական փորձով: Ակտիվ էվթանազիան անհամատեղելի է «Հիպոկրատի երդման» հետ, որտեղ կա այսպիսի պարտավորություն. «Ես ոչ մեկին չեմ տա այն մահացու միջոցը, որը նա խնդրում է ինձնից, եւ ցույց չեմ տա այնպիսի միջոցներ, որոնց օգնությամբ նա կարող է իրագործել մեռնելու իր մտադրությունը»: Ելնելով էվթանազիայի հանդեպ առկա հասարակական ոչ միանշանակ վերաբերմունքից՝ մի շարք երկրներում օրենսդիրը տուժողի խնդրանքով սպանությունը համարում է քրեորեն պատժելի, բայց միեւնույն ժամանակ դիտում որպես մեղմացնող հանգամանք: Օրենսդրի այս մոտեցումն արտահայտվում է հետեւյալ եղանակներով՝ քննարկվող արարքն ամրագրել մեղմացուցիչ հանգամանքներով, հանցակազմով կամ օրենսդրորեն ամրագրել կարեկցանքի կամ նմանատիպ շարժառիթներով արարքի կատարումը որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Շատ երկրներում օրենսդիրն այս խնդրի վերաբերյալ ընդհանրապես իր վերաբերմունքը չի արտահայտել՝ հարցի լուծումը թողնելով դատական պրակտիկային: Ներկայումս կարեկցանքի շարժառիթով տուժողի սպանությանը նվիրված հատուկ հոդվածներ կամ առանձին նորմեր ունի շուրջ երեսուն երկրի քրեական օրենսգիրք: Այն երկրներում, որտեղ բացակայում է կարեկցանքի շարժառիթով սպանություն հանցակազմը, այն համարվում է պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք: Այդպես է նաեւ ՀՀ-ում (*Դավթյան Ս., «Բիոէթիկայի ներածություն», էջ 115–117*):

Շարունակությունը՝ էջ 7

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ծննդյան 200–ամյակին ընդառաջ (1820–1901)

Սկիզբը՝ թիվ 22–23

Ալիշան բանաստեղծը. «Երգք Նահապետի» շարքը

Կնկարելի էր 1830 թվականից ապրել Վենետիկի Մխիթարյանների վանական միջավայրում, աշակերտել Արսեն Բագրատունուն ու նշանավոր մյուս վարդապետներին, համագործակցել նրանց հետ, գրել բանաստեղծություններ եւ չլինել կլասիցիստ կամ չկրել գրական այդ ուղղության ազդեցությունը: Վաղ շրջանում Ղ. Ալիշանը, հայագիտական ուսումնասիրություններին զուգահեռ, մյուս վարդապետների նման հրատարակել էր գրաբարով կլասիցիստական բանաստեղծություններ եւ առանձնապես չէր տարբերվում նրանցից: Սակայն «Նահապետ» ստորագրությամբ քերթվածներով նա հայտնի դարձավ 1847 թվից, երբ «Բազմավեպում» տպագրեց նախ «Հայոց աշխարհիկ» եւ «Պլպուլն Ավարայրի» քերթվածները, իսկ հետագայում՝ նոր բանաստեղծությունների հավելումով, ամբողջացրեց «Երգք Նահապետի» շարքը: Ղ. Ալիշանը, որպես բանաստեղծ, ստեղծագործել է մեկ տասնամյակից մի փոքր ավելի, իսկ կյանքի մնացած մասը գերազանցապես զբաղվել է հայագիտությամբ:

«Նվագք» ընդհանուր խորագրով շուրջ 1300 էջ կազմող բանաստեղծական հինգ հատորները, որոնք տպագրվեցին 1857–58 թթ., ունեն թեմատիկ վերնագրեր, եւ յուրաքանչյուրում ընդգրկված են իրականության այս կամ այն ոլորտին վերաբերող, վերնագրին գրեթե ճշգրտորեն համապատասխան գրաբար բանաստեղծություններ: Աշխարհաբարով գրվածները, իհարկե, անհամեմատ քիչ են, ընդամենը՝ 90 էջ, եւ «Հայրունի» հատորի երկու հրատարակություններում (1858 եւ 1867 թթ.) զետեղված, «ռամկերենով»՝ արեւմտահայ աշխարհաբարով գրված այս 11 քերթվածներն են ապահովել Ղ. Ալիշանի բանաստեղծական փառքը, եւ ոչ թե՝ մեծաքանակ գրաբար ոտանավորները:

Այսպես, «Մանկունի» վերնագրով 1-ին ժողովածուն պարունակում է զուտ մանկական բանաստեղծություններ, «Մաղթունի» ժողովածուն, որն ընդգրկում է մաղթանքներ ու բարի ցանկություններ, Ղ. Ալիշանը նվիրել է իր կրտսեր եղբորը՝ Սերովբեին, որը մեկնել էր Ամերիկա, տեղի հայ համայնքում ազգանպաստ գործունեություն էր ծավալել ու հետագայում դարձել դրամագետ: «Բնունի» ժողովածուի բանաստեղծությունների քնարական հերոսներն իսկապես բնության զավակներ են՝ հողի մշակ, մրգապահ, որսորդ, ճանապարհորդ եւ բնաշխարհի հետ կապված զանազան զբաղմունքների տեր մարդիկ:

Պատմական թեմաներով բանաստեղծությունները ընդգրկված են «Հայրունի» խորագրով ժողովածուում, որտեղ նաեւ ալիշանյան աշխարհաբարով գրված բանաստեղծությունների հիշյալ շարքն է: «Տերունին» կրոնական թեմաներով բանաստեղծությունների գիրք է՝ աղոթքներ ու մաղթանքներ պարունակող, իսկ «Տխրունին»՝ պարզապես մահերգերի՝ էլեգիաեղերերգերի ժողովածու: Մխիթարյան մյուս բանաստեղծներից եւ հենց իր «Նվագք» հատորների հեղինակից նա էականորեն տարբերվում է «Նահապետի երգեր» շարքի բանաստեղծություններով. Դրանցով էր, Նալբանդյանի բնութագրմամբ, «չափաբերական քերթվածոց մեջ ախոյան չունեցող արժանավոր վարդապետը» արեւմտահայ իրականության մեջ դառնում Խ. Աբովյանի զուգահեռը հայ նոր գրականության սկզբնավորման գործընթացում:

«Նահապետը» Ղ. Ալիշանի գրական ծածկանունն է, որով նա ստորագրել է իր աշխարհաբար բանաստեղծությունները՝ դրանք ինչ-ինչ նպատակներով հեռացնելով իրենից եւ վերագրելով իբրեւ թե 17-րդ դ. սկզբներին՝ շուրջ երկուսուկես դար առաջ ապրած եւ ստեղծագործած «Նահապետ» անունով ինչ-որ անհայտ երգչի: Այդ անունը 11 բանաստեղծություններից 9-ում Ղ. Ալիշանը հիշատակել է ավելի քան երեք տասնյակ անգամ՝ ըստ երեւույթին իր ստեղծագործությունները կարծեցյալ Նահապետին վերջնականապես հասցեագրելու նպատակադրմամբ: Սակայն հենց սկզբից էլ Ղ. Ալիշանի եւ Նահապետի նույնականությունը ժամանակակիցների մեջ կասկած չի հարուցել՝ հակառակ «Նահապետի երգերը» հին երգարաններից ու ոսկեփորիկներից արտագրելով հրատարակելու՝ Ղ. Ալիշանի հավաստիացումներին:

Իսկ թե ինչո՞ւ էր Ղ. Ալիշանն իր գեղարվեստական լավագույն ստեղծագործությունները ներկայացնում ուրիշի անունով եւ վերագրում հատկապես պարսից Շահ-Աբաս արքայի ժամանակներին, կան ընդամենը հավանական ենթադրություններ եւ ակադ. Էդ Ջրբաշյանի՝ գիտականորեն համոզիչ ու սպառիչ բացատրությունները (*տես Էդ. Ջրբաշյանի «Ղեւոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը եւ նրա ներքին միասնությունը» հույժ արժեքավոր ուսումնասիրությունը «Գրողը եւ ժողովուրդը» գրքում, Եր., 1989, էջ 51–90*):

Միշտ պետք է նկատի ունենալ, որ թեեւ Մխիթարյանները գրաբարապաշտներ էին հռչակված, սակայն իրողություն է եւ այն, որ նրանց միջավայրում աշխարհաբարն ամենեւին էլ արհամարհված կամ արգելված չի եղել.1843 թվից մինչեւ օրս հրատարակվող նրանց ամենահեղինակավոր պարբերականը՝ «Բազմավեպն» անգամ առաջին տասնամյակների իր էջերում զետեղում էր մեծ քանակությամբ աշխարհաբար նյութեր, եվրոպական ու ռուս հեղինակների երկերի աշխարհաբար թարգմանություններ: Օրինակ՝ մեզանում նույնիսկ գրաբարամոլ համարված Գաբրիել Այվազովսկին այդ պարբերականի էջերում է տպագրել Ի. Ս. Կռիլովի առակների աշխարհաբար թարգմանությունները: Մխիթարյանները գրաբարով հիմնականում հրատարակում էին հին բնագրերն ու «բարձր ոճով» կլասիցիստական սեփական ստեղծագործությունները: Սակայն այս ամենով հանդերձ՝ «ռամկերենով» գրված սեփական բարձրակարգ բանաստեղծությունները Ղ. Ալիշանն իր անունով հրատարակելը նպատակահարմար չի համարել:

Երկրորդ՝ «Բազմավեպում» ալիշանյան աշխարհաբարով գրված ու տպված այդ երգերը ընդհանրություններից ավելի էական տարբերություններ ունեին նույն Ալիշանի եւ մյուս Մխիթարյանների դավանած գրաբարագիր կլասիցիզմի կանոններից ու կարծրատիպերից: Դրանք իրենց բովանդակային հարստությամբ, պատմական հենքի վրա հարցադրումների արդիականությամբ, պատկերի բնականությամբ ու զգացմունքային հագեցվածությամբ, լեզվի ժողովրդայնությամբ համահունչ էին հենց եվրոպական ռոմանտիզմի գեղագիտությանը: Ուրեմն՝ կար գրական երկու ուղղությունների կամ ստեղծագործական համակարգերի՝ իր դարն ապրած եւ արդեն հեռացող կլասիցիզմի եւ հայ գրականության մեջ նոր հաստատվող ռոմանտիզմի հակասությունների խնդիրը:

Կար եւ մի այլ էական հանգամանք. XIX դ. կեսերին լինելով եվրոպական գիտամշակութային տարբեր կենտրոններում եւ կուտակելով իմացության վիթխարի պաշարներ՝ Ղ. Ալիշանը քաջատեղյակ էր համաշխարհային գրականության պատմության մեջ սեփական ստեղծագործությունն ուրիշին վերագրելու կամ ուրիշի անունով տարածելու բազմաթիվ օրինակների: Առավել հայտնիներից մեկը որպես թե մ. թ. 3-րդ դարում շոտլանդացի լեռնականների կյանքն ու կռիվները հին գալլերենով պատկերող դյուցազն Ֆինգալի կարծեցյալ որդի Օսիանի կողմից ստեղծված էպիկական պոեմների՝ անգլերենով արձակ թարգմանություններն են, որ 18-րդ դ. 60-ական թթ. հրատարակվել են շոտլանդացի բանաստեղծ Ջեյմս Մաքֆերսոնի (1736–1796) կողմից:

1763 թ. նա, իբրեւ թե, Շոտլանդիայի հյուսիսի լեռնականներից գրառել եւ անգլերենի է թարգմանել եւ պատմաառասպելական դյուցազն Ֆինգալի որդի Օսիիանի անունով հրատարակել է «Ֆինգալ» եւ «Թեմորա» պոեմները, ինչպես նաեւ, այսպես կոչված, «հին պոեզիայից» մոտ երկու տասնյակ էպիկական փոքր դրվագներ, որոնց հանդեպ բուռն հետաքրքրություն էին ցուցաբերում ժամանակակիցներն ու հաջորդները: 1765 թ. նույն այդ գործերը վերահրատարակվեցին 2 հատորով: «Օսիանի պոեմները» լայն արձագանք գտան ոչ միայն անգլիական գրականության մեջ: XVIII–XIX դարերում Գերմանիայում՝ «Գրոհի ու փոթորկի» շրջանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ռուսաստանում, Ամերիկայում դրանք դարձել էին լայն քննարկումների առարկա, հիշատակվել այնպիսի գրողների երկերում, ինչպիսիք են Գյոթեի ու Պուշկինի նման հանճարները:

Սակայն Ջ. Մաքֆերսոնն ինքը չի մատնանշել, եւ հետազոտողներից որեւէ մեկն էլ չի հայտնաբերել Օսիանի որեւէ ձեռագիր սկզբնաղբյուր: Հետագայում, սակայն, պարզվել է, որ Ջ. Մաքֆերսոնը հենց ինքն է գրած եղել «Օսիանի պոեմները», որոնց նա իր կյանքի վերջին տասնամյակներում այլեւս չի անդրադարձել, իսկ գաղտնիքը բացվելուց հետո էլ նա նույնիսկ հրապարակայնորեն պախարակվել է որպես կեղծարար:

Շարունակությունը՝ էջ 6

Շնորհների հանձնման արարողություն Մայր Աթոռում

Սկիզբը՝ էջ 3

Հատկապես գնահատարժան են Անիի պատմամշակութային ժառանգության վերաբերյալ Ձեր աշխատությունները, որոնք մեր պատմական մայրաքաղաքի հոգեւոր ու մշակութային հարուստ ժառանգությունն են ներկայացնում մեր ժողովրդին:

Ձեր գիտելիքներն ու տարիների փորձառությունը սիրով փոխանցել եք նաեւ երիտասարդ սերնդին՝ կրթելով շնորհաշատ մասնագետներ Երեւանի պետական մանկավարժական համալսարանում:

Մենք առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին: Երկար տարիներ Դուք դասախոսեցիք Մայր Աթոռիս Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, ստանձնեցիք «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի խմբագրի պաշտոնը եւ տարբեր հանձնառություններ՝ համենայնի դրսեւորելով մեր Եկեղեցու հանդեպ Ձեր որդիական սերն ու նվիրումը»:

Տիար Գագիկ Գյուրջյանին շնորհված հայրապետական կոնդակում ի մասնավորի արձանագրված է. *«Մեծարգո պրն Գյուրջյան, երկար տարիներ պետական բարձր ու պատասխանատու պաշտոններում նվիրյալ ծառայությամբ Դուք ճարտարապետական Ձեր բազմափորձ գիտելիքներն ու կարողությունները նախանձախնդրորեն ի սպաս եք բերում մեր պատմական վանքերի ու եկեղեցիների եւ մշակութային արժեք ներկայացնող հուշարձանների պահպանության ու վերականգնման ազգանվեր գործին: Ձեր նախագծերով ու անմիջական ղեկավարությամբ վերականգնվել են ճարտարապետական բազմաթիվ կոթողներ ինչպես Հայաստանում, այնպես եւ նրա սահմաններից դուրս՝ սերնդեսերունդ ներկայացնելու մեր հայրերի ստեղծած փառավոր ժառանգությունը:*

Մեզ համար գոհունակություն է, որ գործունեության ողջ ընթացքում Դուք դրսեւորել եք Ձեր հոգու անկեղծ սերն ու նվիրումը հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Մենք մշտապես ականատես ենք եղել մեր մայր Եկեղեցուն զորակցելու եւ Մայր Աթոռի կողմից իրականացվող շինարարական ծրագրերին աջակցելու Ձեր պատրաստակամությանը՝ ի խնդիր մեր սրբատեղիների նորոգության ու պատշաճ բարեզարդման»:

Տիկ. Դոնարա Էլոյանին ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակում գրված է. *«Այսօր առիթն ունենք Մեր բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ հավատավոր հայուհուդ եւ անվանի բժշկիդ, առողջապահության ասպարեզում Ձեր երկարամյա բազմարդյուն գործունեության համար, որի մասին տեղյակ ենք «Իզմիրլյան» հիվանդանոցի տնօրեն տիար Արմեն Չարչյանի միջոցով: Գովելի է, որ Դուք տասնյակ տարիներ անընվազ սիրով ու նվիրումով Ձեր կյանքն ու աստվածահաճո գործն ընծայաբերում եք մեր ժողովրդին եւ Ձեր գիտելիքներն ու կարողություններն ի սպաս դնում, որպեսզի բազմաթիվ հիվանդներ ապաքինվեն ու վերագտնեն իրենց առողջությունը: Այսօր շատերի հոգիներում երախտագիտությունն ու բարի մաղթանաց հայցն է առ Բարձրյալ Տերը՝ Ձեր եւ Ձեր ընտանիքի համար:*

Մենք ուրախ ենք մեծապես, որ Ձեր անսպառ եռանդով ու նախանձախնդրությամբ Դուք բարի օրինակ եք «Իզմիրլյան» հիվանդանոցի երիտասարդ բժիշկների ու բուժաշխատողների համար՝ արժանանալով նրանց անկեղծ սիրուն ու հարգանքին»:

Կոնդակների ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծարյալներին հանձնեց Հայ Եկեղեցու շքանշաններն ու կոնդակները: Պարգեւաբաշխության առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաեւ շնորհընկալները՝ Հայոց Եկեղեցու բարձր գնահատանքի ու պարգեւի համար երախտագիտություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Հանդիսությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությամբ ու բարեմաղթանաց շնորհավորական խոսքով:

Երեկույթին երաժշտական կատարումներով հանդես եկան «Նաիրյան» համույթը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սարկավագաց երգչախումբը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՉԱՐԵՆՅԸ ԵՎ ԳՅՈՒՄՐԻՆ

Սկիզբը՝ թիվ 23

1925 թ. հուլիսի 31-ին Չարենցն արտասահմանից Մոսկվա–Թիֆլիս ճանապարհով վերադառնում է հայրենիք (*ԽՀ, թիվ 175, 2 օգոստոս*): Թիֆլիս–Երեւան ճանապարհին Գյումրիի երկաթգծային կայարանում հանդիպում է տեղի երիտասարդ գրողներին: Տրամադրությունը կայտառ էր, հագին՝ մոխրագույն նոր կոստյում, գլխին՝ լայնեզր գլխարկ, շուրթերին՝ սիրո պես անմեղ հեգնանք՝ մի՞թե սա է Երկիր Նայիրին, այսինքն՝ մի՞թե սա է իր ընտրյալը: Դիմավորողներն արդեն հիշատակված «Հոկտեմբեր», ապագա «Նոյեմբեր»-ականներն էին՝ Մահարու եւ Արմենի առաջնորդությամբ: Չարենցը նրանց հրավիրում է Երեւան, «Հոկտեմբերը» վերամկրտում «Նոյեմբեր» եւ ընթացք տալիս գրական բուռն գործունեության: Ասում է՝ «Սկսելու ենք մեծ գրական կյանք»:

Իսկ Չարենցն արտասահմանից վերադառնում էր արվեստի հանդեպ նոր պատկերացումներով, դեռեւս Եվրոպայում արդեն իսկ վերանայել էր «լեֆյան թմբուկին» հարող իր գրական տեսակետները եւ այդ մասին գրել մտերիմներին:

Փաստորեն «Նոյեմբեր» գրական միությունն ստեղծվեց Գյումրիի գրական ուժերի հիման վրա, որոնք եւ դարձան այդ կազմակերպության հիմնադիր անդամները:

Արտասահմանյան ճամփորդությունից հետո Չարենցը հանդիպումներ է ունեցել հանրապետության աշխատավորների հետ եւ պատմել տպավորությունները: Այդ նպատակով 1925-ի օգոստոսի սկզբին նորից Գյումրիում էր եւ քաղլուսգլխվարի թատրոնում դասախոսում է իր արտասահմանյան ուղեւորության մասին: Հանդիպումներ է ունենում աշխատավորության հետ եւ պատմում ճամփորդությունից ստացած տպավորությունները: Հանդիպում է տեղի մնացած գրողներին, վերստին առաջարկում վերացնել «Հոկտեմբերը» եւ մտնել «Նոյեմբեր» խմբակցության մեջ:

Մանկավարժական տեխնիկումի շենքում հանդիպում է նաեւ Պոլիգոնի որբանոցներից հավաքված բարձր դասարանների աշակերտության՝ որբաշխարհի սաների հետ, որոնց մեջ էր Խաչիկ Տոնոյանը՝ ապագա Դաշտենցը, որ հետո ուսուցչություն պիտի աներ Շիրակի Հոռոմ եւ Սառնաղբյուր գյուղերի դպրոցներում: Վերջինիս հիշողությամբ՝ «Չարենցը եկավ Պոլիգոն»: Կայանում է ցանկալի ծանոթությունը:

Իմանալով, որ Շուշանիկ Կուրղինյանը Գյումրիում է՝ հանդիպումից հետո այցելում է անկողնուն գամված բանաստեղծուհուն, ծնկի է իջնում նրա առաջ եւ համբուրում ձեռքերը:

Հյուրընկալվում է Մահարու ընտանիքում, նույն օրն էլ վերադառնում Երեւան:

Մինչ այս վերջին հանդիպումը «Հոկտեմբեր»-ականները դուրս էին եկել Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի (ՀՊԳԱ) շարքերից, ինչի կապակցությամբ 1924-ի ապրիլի 26-ին «Խորհրդային Հայաստանը» տպագրում է ՀՊԳԱ-ի հայտարարությունը, ըստ որի՝ Գյումրիի բանվորագյուղացիական գրական կազմակերպությունն այլեւս իր մասը չէ: Մահարին հանդես է գալիս ՀՊԳԱ-ի գաղջ էությունը բացահայտող «Ինչու անջատվեցինք» (*ԽՀ, 1924, թիվ 152, 5 հուլիս*) փայլուն հոդվածով: Հաջորդում է ՀՊԳԱ-ի նախագահ Վահրամ Ալազանի, քարտուղար Նաիրի Զարյանի «Մեր պատասխանը» (*ԽՀ, 1924 թիվ 164, 19 հուլիս*) թունավոր անդրադարձը: Մինչեւ «Նոյեմբեր» դառնալը՝ «Հոկտեմբերի» ներկայացուցիչները Գյումրիում կազմակերպում են տեղի գրական կյանքը: Պայքարը թեժ էր:

Առանձնահատուկ էր Չարենցի վերաբերմունքը հատկապես Մահարու եւ Մկրտիչ Արմենի հանդեպ: Վանի այգեստաններից Գյումրի ընկած Մահարուն թողնենք, անցնենք գյումրեցի Արմենին: Նա պետք է ուղեգրով մեկներ ուսուցչության՝ Մեղրի: Որպես կարող ուժի՝ Չարենցը նրան պահում է Երեւանում, օթեւան տալիս իր տանը, հատկացնում գրպանի ծախսի գումար, տեղավորում աշխատանքի, տպագրում գրքերը, հռչակում գրող եւ ներգրավում գրական բուռն գործունեության մեջ: Արդյունքը՝ «Հեղնար աղբյուր» հրաշալի վիպակը, «Չարենցի եւ հարակից խնդիրների մասին» ուղենշային հոդվածը եւ այլ արժանահիշատակ գործեր: 1934-ի մարտի 14-ին Արմենի մասին Չարենցն արել է այսպիսի օրագրային գրառում. «Մեր երիտասարդ գրողներից ես ամենից շատ սիրում ու հավանում եմ Արմենին: Թվում է, որ մեր նորագույն գրականության ամենաինքնուրույն եւ ամենալուրջ դեմքն է նա» (*ԵԺ, IV, 477–478*): Ընդհանրապես Չարենց–Արմեն գրական առնչությունն արժանի է լուրջ ուշադրության, մանավանդ որ պահպանվել է վերջինիս հարուստ արխիվը:

Չարենցը գրական կյանքը դրել էր հունի մեջ, գրական միջոցառումները կազմակերպվում էին ըստ նրա ծրագրի: 1925 թ. օգոստոսի 25-ին Գյումրիի Բանվորական ակումբում Մահարու մասին զեկուցում է Արմենը: Քննարկման ժամանակ «…բոլորը հույս հայտնեցին, որ Գուրգեն Մահարին կկարողանա խուսափել խոշոր սայթաքումներից եւ կդառնա մեր լավագույն պրոլետ-

պոետներից մեկը» (*ԽՀ, 1925, թիվ 197, 30 օգոստոս*):

Իսկ արդեն 1925 թ. օգոստոսի 26-ին Վանանդեցին Գյումրիում բանակցություններ է վարում «Հոկտեմբերի» հետ «համագործակցության լեզու գտնելու երկու միությունների մեջ»: Չախողվում է, քանի որ Չարենցի ազդեցությունը զորավոր էր (*ԽՀ, թիվ 197, 30 օգոստոս*):

1926-ին Գյումիում լույս է տեսնում Վահրամ Թերզիբաշյանի «Գիր ու արվեստ (*Դեմքեր, երկեր, հարցեր*)» գիրքը: Բաժիններից մեկը վերնագրված է. «Եղիշե Չարենց: Հայ բանաստեղծական արվեստի զարգացման նոր էտապը»: Գրապատմական շղթայի մեջ խորհրդապաշտության, հակապագայապաշտության եւ նեոռոմանտիզմի համակարգերում արված են Չարենցի գործի, վաստակի եւ գրական դիրքորոշման լուրջ բացահայտումներ: Ժամանակը դեմ էր ապագայապաշտությանը, ուստի՝ Չարենցին պաշտպանելու նպատակով Թերզիբաշյանը գրում է. «Եղիշե Չարենցի փորձերը՝ ֆուտուրիզմը պատվաստելու մեր իրականությանը՝ ֆիասկո կրեցին» (էջ 55): Իրականում Չարենցի շնորհիվ ապագայապաշտությունն իր նկատելի ներգործությունն ունեցավ ժամանակի հայ պոեզիայի վրա (*այս մասին տես մեր «Հայկական ապագայապաշտություն» գրքում, 2009*):

«Ստամբոլ» պոեմի կապակցությամբ Թերզիբաշյանն ավելացնում է. «…արվեստը հասել է կատարելության: Բանաստեղծությունը տալիս է ձեւական ապշեցուցիչ էֆեկտներ, ջազբանդը եւ ֆոկստրոտը պատկերելիս ռիթմը ստանում է նեգրական մուզիկայի սինկրոպային բախում» (էջ 63): Ըստ Թերզիբզշյանի՝ Չարենցի արվեստը Տերյանի համեմատ բերում է էպոխային բարեշրջում:

1929-ի մայիսի 6-ին Վահան Տեր-Առաքելյանը Գյումրիում կոմիտասյան համերգ է տալիս: Աղավնի Մեսրոպյանը վկայում է, որ հատուկ այդ համերգին ներկա լինելու համար Չարենցը ժամանել էր Երեւանից եւ բուռն ծափերով ողջունում էր երաժիշտներին:

Ակնարկեցինք Արմենի «Չարենցի եւ հարակից խնդիրների մասին» (*ԳԹ, 1933, թիվ 7, 21 ապրիլ*) հոդվածը, որ ոչ միայն աղմկահարույց էր, այլեւ բախտորոշ նշանակություն ունեցավ թե՛ Արմենի ու Չարենցի, թե՛ ամբողջ «Նոյեմբեր» խմբի համար, որովհետեւ համընդհանուր սխեմատիզմի մեջ բերում էր ճշմարիտ գրական խոսք:

Հոդվածը բաժանված է ենթամասերի՝ «1. Քննադատության մասին, 2. Ինչո՞վ է Չարենցն արժեքավոր, 3. Ազգայնականը եւ ազգայինը, 4. Գրական տենդենցներն այսօր»: Մի ամբողջ գրական խմբակցության անունից Արմենը, ընդդեմ սոցիալիստական գաղափարական համահարթեցման, հանձին Չարենցի՝ պաշտպանում էր ազգային առանձնահատկությունների խտացման դրույթը: Արմենը գրում է, որ Չարենցի ուղին «շարունակ եղել է ազգային հատկանիշների կոնսոլիդացիայի ուղին իր երկերում…»: Նրա ստեղծագործությունն ընթացել է «ազգային ինքնորոշման ճանապարհով»: Այսքանն էլ բավական էր մահացու հալածանքների համար, որ որակվում էին նացիոնալիզմ:

Շարունակությունը՝ էջ 7

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Սկիզբը՝ էջ 5

Ճիշտ այս օրինակով էլ հայ մեծագույն ձեռագրագետ-տեքստաբաններից մեկը՝ Ղ. Ալիշանը, իր ստեղծագործությունները հրատարակել է ուրիշի անունով եւ մատնացույց չի արել իր փառաբանած երգչի՝ Նահապետի 17-րդ դարի կամ հետագա ժամանակների որեւէ ձեռագիր սկզբնաղբյուր, իբրեւ այդպիսիք՝ նա անորոշ նշել է միայն «հին երգարաններ ու ոսկեփորիկներ» արտահայտությունը, որոնցից, իբր, վերցրել է դրանք, բայց մեծարել է մինչ այդ անհայտ երգչին՝ որպես մեր ժողովրդի անցյալի փառքերից ու պարծանքներից մեկին եւ իր սեփական ստեղծագործությունները հրատարակել է նրա անունով (*Օսիան–Մաքֆերսոնի օրինակով Ղեւոնդ Ալիշան–Նահապետ նույնականության մասին առավել հանգամանորեն տե՛ս Էդ. Ջրբաշյանի նշված աշխատությունը «Գրողը եւ ժողովուրդը» գրքում, Եր., 1989*): Ղ. Ալիշանն ինքը, նախքան 1852 թ. «Հայոց երգք ռամկականք» գիրքը հրատարակելը, «Բազմավեպի» էջերում տպագրել է ուշմիջնադարյան անհայտ հեղինակների բազմաթիվ երգեր՝ մատնանշելով նրանց «իմաստավորությունն» ու կառուցիկությունը, «քաղցրությունը» եւ գեղարվեստական այլեւայլ արժանիքներ:

Ավելին. նա Սայաթ-Նովայի Դավթարը 1852 թ. հրատարակած Գեւորգ Ախվերդյանին հինգ տարով կանխելով՝ մատնացույց է արել «վաթսուն–յոթանասուն տարի առաջ ռամկերենով ստեղծագործած» եւ Հայաստանում «աշըղ կոչված» Սայաթ-Նովային, Ալլահվերդուն, Քեշիշ օղլուն եւ Ազբար Ադամին՝ ժողովրդական այդ երգիչների միջավայրում փորձելով ամրակայել Նահապետի հավաստի լինելը: Ավելի վաղ ժամանակներում՝ ասենք X–XV դարերում, անհավանական կլիներ աշխարհաբարով ստեղծագործած ժողովրդական երգչի գոյությունը, որովհետեւ դեռեւս ձեւավորված չէր գրական աշխարհաբարը: Այս երգիչն իբրեւ թե վաղ հասակից «գրոց լեզվով»՝ գրաբարով, ստացած է եղել կանոնավոր կրթություն եւ նախապես գրել է կլասիցիզմի «բարձր ոճով», սակայն ծերության տարիներին, հարստացած կենսափորձով ու իմաստությամբ, անցել է ռամկերեն-աշխարհաբարին ու գրել ժողովրդական ոճով: Սա էլ Նահապետի ինքնության եւ իր անձնավորության հետ ունեցած առնչությունների մասին թափանցիկ ակնարկ է, որն այդ երկուսին՝ Ալիշանին ու Նահապետին, ուղիղ գծով կապում է միմյանց: Ալիշանի գրական ըմբռնումներն իրավացիորեն կապելով 1840-ական թթ. եվրոպական ռոմանտիկական շարժման եւ, մասնավորապես, օսիանականության հետ՝ ակադ. Էդ. Ջրբաշյանը գրել է. «Իհարկե, ոչ մի կասկած լինել չի կարող, որ Եվրոպայի կենտրոնում ապրող եւ ստեղծագործող, եվրոպական շատ լեզուների տիրապետող հայ բանաստեղծը ծանոթ էր ե՛ւ Օսիանի այս պոեմներին, ե՛ւ նրանց շուրջ տասնամյակներ տեւած վեճերին: Սխալ չի լինի ասել, որ Մաքֆերսոնի գրական միստիֆիկացիայի ազդեցությամբ էր նաեւ, որ երիտասարդ հայ բանաստեղծը 1847 թ. որոշեց հորինել Նահապետի՝ որպես «հայ Օսիանի» կերպարը, նրանով հրատարակել իր գրչի ամենից գեղեցիկ եւ ներշնչված էջերը» (*նույն տեղում, էջ 68*):

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Էվթանազիայի բարոյական եւ կրոնական ընկալումները

Սկիզբը՝ էջ 5

Էվթանազիան Հայաստանում

Բժշկության եւ բարոյագիտության առնչություններին վերաբերող մտքերի հանդիպում ենք միջնադարյան հայ փիլիսոփաների, բժիշկների աշխատություններում, մասնավորապես՝ մեծ մտածող Դավիթ Անհաղթի գործերում, որի ծննդյան 1500-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մեծ շուքով նշվեց Սալոնիկում եւ Երեւանում 1980 թ.: Նա «Սահմանք իմաստության» գրքի Թ գլխում, շարունակելով Ներսես Մեծի եւ այլոց մտքերը, հարց է տալիս՝ արդյոք իրավունք ունի կամ կարող է բժիշկը թույլ տալ ինքնասպանություն գործել անբուժելի հիվանդին, եւ պատասխանում է՝ ոչ, որովհետեւ «ինչպես լավ նավապետը փորձվում է ոչ թե խաղաղ ծովում, այլ ալեկոծության ժամանակ, նույնպես եւ խիզախ հոգին փորձությանն ընդառաջ է գնում»: Դավիթ Անհաղթի այս մտքերը բխում են փիլիսոփայական նույն դիրքերից, որոնք արտահայտվել են Հիպոկրատի հանրահայտ երդման մեջ, որտեղ ի թիվս այլ արգելքների՝ բժիշկը երդվում է. «Խոստանում եմ, չնայելով խնդրանքի, ոչ ոքի չտալ մահացու դեղ»: Իսկ այն բժիշկը, որ ելնելով այս կամ այն դրդապատճառից, այնուամենայնիվ, դրժում է իր երդումը եւ թույն տալիս հիվանդին, ենթարկվում է ոչ միայն բժշկության աստվածների եւ մարդկանց անեծքին, այլեւ վարչական պատժի՝ ընդհուպ մահապատժի: Այդ մասին կարդում ենք V դարի հայ պատմիչ, քերթողահայր Մովսես Խորենացու «Գիրք պիտոյից» աշխատության մեջ: Հայտնի է, որ ստոիկյան փիլիսոփայության հետեւորդներն ինքնասպանությունն արդարացնում էին ինը դեպքում՝ սով, բոլոր մերձավորների կորուստ, տարերային աղետ, մարդկային արժանապատվության ոտնահարում, անբուժելի հիվանդություն, զառամախտ եւ այլն: Ինչպես նշում է Ս. Ա. Վարդանյանն իր աշխատության մեջ, վերջին երկու դեպքն ուղղակի կապ ունեն բժշկության հետ: Այսպես, օրինակ, ստոիկներն ասում էին. «Արդ, ճիշտ է վարվում նաեւ նա, ով սպանում է ինքն իրեն, եթե նրա մարմինը ենթարկվել է ինչ-որ չար հիվանդության եւ փչացման, այդ անբուժելի ցավից ազատվելու համար»: Այսպես, օրինակ, մի ոմն կինիկյան (ցինիկ) փիլիսոփա, որը կիսով չափ անդամալուծված էր, դիմեց Յուլիանոս կայսերը՝ ասելով. «Մարմնիս կեսը մեռավ, իսկ մյուս կեսը դեռ ապրում է: Գթա՛, ո՛վ թագավոր, կիսված կինիկյանիս, հրամայի՛ր բժշկել կամ սպանել»: Այդպես էլ՝ «Ճիշտ է վարվում նա, ով խորին ծերության հասնելով, վերջ է տալիս իրեն, երբ արդեն սկսում է զառանցել, աղճատել ու անկապ բաներ ասել»: Եթե ստոիկների պատասխանն էվթանազիային «այո» էր, ապա հայ միջնադարյան փիլիսոփաների, բժշկապետների եւ այլոց աշխատություններում երբեւիցե չի խրախուսվում այդ միտքը: Օրինակ՝ Դավիթ Անհաղթը, մերժելով ինքնասպանությունը, ասում է. «Իսկ փորձությունները, որտեղ էլ դրանք պատահեն, գոյություն ունեն ոչ թե նրա համար, որ վերջ տան իրեն, այլ որպեսզի փորձեն մարդու ոգին»: Հատկանշական է, որ միջնադարյան հայ օրենսդրական մտքի ռահվիրաներ Մխիթար Գոշի եւ Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքերի» 119 եւ 154 հոդվածների համաձայն՝ միտումով եւ կամ տգիտության պատճառով հիվանդի առողջությունը վնասող բժիշկները, նաեւ իրենց աշակերտներին պատշաճ գիտելիքներ չտվող բժիշկները, պատժապարտ էին: Սա խոսում է միջնադարյան Հայաստանի կրթական օջախների նկատմամբ ցուցաբերվող բարձր պահանջկոտության մասին: Այսպիսով՝ ակնհայտ է բժշկի պատասխանատվության խոր գիտակցումը հայկական օրենսդրության մեջ, որ միաժամանակ վկայում է թե՛ երկրի բժշկանոցների եւ թե՛ ուսուցման մասնագիտական բարձր մակարդակի մասին: Աշխարհիկ ընկալման մեջ տառապանքն ու ցավերը միմիայն բացասական երանգ են ստացել, սակայն քրիստոնեական պատկերացմամբ դրանք ազնվացնող ազդեցություն են ունենում մարդու հոգու վրա եւ փաստում են Աստծուն հետեւելու մեր պատրաստակամությունը: Ընդսմին նշվում է նաեւ հասարակության մեղավորությունը կյանքի եւ մահվան սահմանային իրավիճակներում. արդյոք մահամերձը ստանո՞ւմ է անհրաժեշտ բժշկական ամոքումը, գուցե կանայք էվթանազիայի են դիմում այն պատճառով, որ հասարակության կողմից նրանց պարտադրված է խնամողի դերը, եւ նրանք չեն ուզում հայտնվել «բեռի» վիճակում: Քրիստոնեական աշխարհընկալումը հիվանդախնամությանը մի նոր իմաստ է հաղորդում, որն արտացոլում է սերը մերձավորի նկատմամբ եւ աստվածային պատվիրանների կատարումը: Քրիստոնյա բարոյագետները պնդում են, որ հիվանդի՝ մահանալու ցանկությունը մահվան պահին լքված լինելու վախի դրսեւորումն է: Այսպիսով՝ դատապարտման ենթակա է կյանքի իրավունքի ցանկացած ոտնահարում (*տե՛ս Դավթյան Ս. Հ., «Բիոէթիկայի ներածություն», էջ 118–125*):

Էվթանազիայի կրոնական դրսեւորումները

Ընդհանուր առմամբ քրիստոնեական եկեղեցին դեմ է էվթանազիա երեւույթին:

Հայ Առաքելական Եկեղեցին չի ընդունում էվթանազիայի որեւէ դրսեւորում՝ լինի դա պասիվ թե ակտիվ, քանի որ կյանքը սուրբ է: Հայոց Եկեղեցու ականավոր ներկայացուցիչները դարեր շարունակ ժխտողական վերաբերմունք են ունեցել ինքնասպանության վերաբերյալ: Հայ հոգեւոր սպասավորները քանիցս դատապարտում են այդ երեւույթը, սակայն դեռ պաշտոնական տեսակետը կենսաէթիկայի աստվածաբանության խնդիրների շուրջ չի հրապարակվել: Այժմ Եկեղեցում մշակվում է այդպիսի խնդիրների վերաբերյալ հայեցակարգ, որը պաշտոնապես կհրապարակվի առաջիկա եկեղեցական ժողովի ժամանակ (*տե՛ս Պողոսյան Լ., նույն տեղում, էջ 159*):

Ասենք, որ Կաթոլիկ Եկեղեցու 20-րդ դարավերջյան ամենահայտնի փաստաթղթերից մեկը Հովհաննես Պողոս Բ պապի 1995 թ. Evangelium vitae1 («Կյանքի Ավետարան») կոնդակն է, որը հենվում է Սուրբ Գրքի, քրիստոնեական ավանդության եւ բնական օրենքի վրա՝ պաշտպանելու համար այն հայտարարությունը, որ էվթանազիան Աստծո հաստատած կարգից հեռացնում է՝ բարոյապես հավասարազոր ինքնասպանությանը կամ սպանությանը: Շրջաբերական այս ուղերձը վերահաստատում է մարդու կյանքի արժեքը եւ անձեռնմխելիությունը: Միայն այս արժեքները հիմք ունենալով՝ մարդը կգտնի արդարություն, խաղաղություն, ճշմարիտ ազատություն եւ երջանկություն (*տե՛ս Պողոսյան Լ., նույն տեղում, էջ 156*):

Բողոքական Եկեղեցում միանշանակ չէ էվթանազիայի նկատմամբ վերաբերմունքը: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ, օրինակ, Գերմանիայում Ավետարանական Լյութերական Եկեղեցին մշակել է մանրամասն ցուցումներ՝ հիվանդի կյանքի վերջի վերաբերյալ, սակայն նրանք մերժում են էվթանազիան: Մինչդեռ ռեֆորմատորական ավանդությունը, օրինակ՝ Հոլանդիայում, պաշտպանում է ակտիվ էվթանազիան (*տե՛ս Պողոսյան Լ., նույն տեղում*):

Ուղղափառ Եկեղեցին գտնում է, որ իրական հավատացյալի միտքը չպետք է զբաղված լինի կյանքի եւ մահվան մասին որոշումներ կայացնելով, այլ պիտի մշտապես աղոթի իր եւ մերձավորների համար: Յուրաքանչյուր բժշկական միջամտություն, որ ուղղված չէ կյանքի երկարացմանը, Ուղղափառ Եկեղեցիները դիտարկում են որպես ոչ բարոյական եւ ոչ էթիկական: Հունական Ուղղափառ Եկեղեցու բիոէթիկայի հանձնախումբը գտնում է. «Միշտ գոյություն ունեն սխալ ախտորոշման վարկած, հիվանդության անկանխատեսելի ելք կամ նույնիսկ հրաշք»: Այս ամենի պատճառով չի թույլատրում ոչ հետաձգել բուժումը, ոչ հրաժարվել դրանից, անգամ եթե հիվանդն է դա պահանջում: Բժիշկը պիտի կարողանա համոզել հիվանդին շարունակելու այն (*տե՛ս Պողոսյան Լ., նույն տեղում*):

Իսլամական բիոէթիկան Շարիաթի շարունակությունն է՝ հենված Ղուրանի եւ Սուննաների վրա (*Islamic bioethics. Can Med Assoc J 60–63*):

Իսլամական արդարադատությունը, որը հիմնվում է Ղուրանի համոզիչ մեկնաբանության վրա, չի ճանաչում կամավոր մահանալու մարդկային իրավունքը: Էվթանազիայի վերաբերյալ իսլամական արդարադատության այս իրավական փաստարկը հիմնվում է երկու կարեւոր կետի վրա, որոնք առկա են Ղուրանում. առաջին՝ որ կյանքը սուրբ է, եւ ցանկացած պատճառ չի կարող ստիպել, որ մարդուն իր իսկ կյանքից զրկեն, եւ երկրորդը՝ Ալլահը միայն գիտի, թե որքան պետք է մարդն ապրի, եւ ոչ ոք չի կարող միջամտել նրա գործերին: Այդ հարցում իսլամական բոլոր գիտնականները համակարծիք են եւ կտրականապես դեմ են էվթանազիային (*տե՛ս Պողոսյան Լ., նույն տեղում, էջ 157*):

Ամփոփելով ասենք, որ ակտիվ էվթանազիան անհամատեղելի է «Հիպոկրատի երդման» հետ, որտեղ կա այսպիսի պարտավորություն. «Ես ոչ մեկին չեմ տա այն մահացու միջոցը, որը նա խնդրում է ինձնից, եւ ցույց չեմ տա այնպիսի միջոցներ, որոնց օգնությամբ նա կարող է իրագործել մեռնելու իր մտադրությունը» (*տե՛ս Նալչաջյան Ա., նույն տեղում, էջ 27*):

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

ՉԱՐԵՆՅԸ ԵՎ ԳՅՈՒՄՐԻՆ

Սկիզբը՝ էջ 6

Չարենցն աշխույժ կապերի մեջ էր գյումրեցի շատ մտավորականների հետ: Նրանցից էր Միսակ Էփրիկը (Էփրիկյան), որը դեռեւս 1912 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Պատանի» ալմանախում տպագրել էր նրա առաջին բանաստեղծությունը, իսկ հետո միասին աշխատել էին պետհրատում: Նրանցից էր նաեւ լեզվաբան Կարապետ Դուրգարյանը, որն ուսանող տարիներին Սուրեն Թարվերդյանի հետ այցելել է Չարենցին տուն, «Գյումրեցի պայծառ Կարոյին» մակագրությամբ նվեր ստացել «Գիրք Ճանապարհի»-ն, հետագայում գրել հուշեր, որից հերթական անգամ պարզվում է, որ Չարենցը դժգոհ է եղել 1922-ի ուղղագրական փոփոխությունից (*«Հուշեր Եղիշե Չարենցի մասին», Սովետական գրող, 1986, էջ 333*):

Չարենց–Գյումրի առնչության վերջին հանգույցը Չարենց–Շիրազ կապն է: 1935-ին պետհրատը տպագրեց Շիրազի «Գարնանամուտ» փոքրիկ ժողովածուն՝ Ալազանի երեք էջանոց առաջաբանով: Չարենցը, որ պետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր եւ ամեն կերպ աջակցում էր երիտասարդ գրողների գրքերի տպագրությանը, բնականորեն նպաստել է նաեւ Շիրազի գրքի տպագրությանը: Բայց Շիրազը դժգոհ մնաց Չարենցից: Ասում էր՝ Ալազանի գրած 60 էջ առաջաբանից թողեց ընդամենը 3 էջ: Մինչդեռ 60 էջ առաջաբան ընդհանրապես գոյություն չի ունեցել:

1935-ի մարտը Չարենցի համար դժվար ժամանակ էր՝ նրան ոչ միայն հեռացրին աշխատանքից, այլեւ միաձայն քվեարկությամբ իր իսկ ծննդյան օրը վտարեցին գրողների միության շարքերից: Չարենցը մատնված էր հալածանքների ու չարախոսությունների: Ահա այս ընթացքում էլ Շիրազին տրամադրում են նրա դեմ: Այս տրամադրվածությունը հետագայում վերածվեց գրական աննկատ թվացող ընդդիմության: Ահա Շիրազը (*Երկեր, I, 1981, էջ 148*).

Չե՞ք զգում, արդյոք, որ իմ տողերում,
Իմ քնքուշ, իմ նուրբ, իմ սուրբ խղճի մեջ,
Իմ՝ երգի փոխված սիրո դողերում
Մեր ժամանակի շշունկն է անշեջ...

Բայց չէ, քանի կամ՝ չեք էլ կռահի՝
Որ երգս ձեր խիղճն արթուն կպահի.–
Ես դարի սիրտն եմ,
Ես շեփորը չեմ:

«Պատասխան մի բանաստեղծի» բանաստեղծության մեջ, այսինքն՝ պատասխան Չարենցին, Շիրազը շարունակում է. «Թե ուզում ես անմահ մնալ՝ // Ժողովրդիդ սիրտը դարձիր» (*Երկեր, I, 1981, էջ 180*): Իսկ Չարենցի՝ «Թե ուզում ես երգդ լսեն՝ ժամանակիդ շունչը դարձիր» (*«Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ NN-ին գրված Երեւանից», եժ, IV, 1968, էջ 26*) կարգախոսին հակադրեց «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակի խիղճը դարձիր» դրույթը:

Այս ամենը լավ է, բայց ժամանակի շնչի մեջ նաեւ ժամանակի խիղճը կա, սիրտը կա, սերը կա, բարոյականությունը կա: Խիղճն ու սիրտը կենդանի շնչի բաղադրիչներից են. եթե շունչն այդքան հզոր ուժ չունենար, մեր մեծ նախնիները Բիբլիան Աստվածաշունչ չէին թարգմանի:

Ուրեմն՝ մեծ հաշվով ճիշտը Չարենցի ժամանակի շունչն է:

Ավելացնենք, որ մի քանի բանաստեղծություններում, ինչպես նաեւ «Էլեգիա՝ գրված Վենետիկում» պոեմում Չարենցը կերտել է նաեւ Գյումրիի քաղաքային կերպարը:

Համակողմանի են Չարենց–Գյումրի կապերը, որոնց կարելի է անդրադառնալ էլ ավելի հանգամանորեն:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ամանորյա հանդիսություն Մայր Աթոռում հատուկ կարիքներով երեխաների համար

Դեկտեմբերի 25-ի երեկոյան, հրավերով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին դաւանի սինդրոմով երեխաների աջակցության՝ «Արեւներ» կենտրոնի սաները, «Մարի Իզմիրլյան» մանկատան հատուկ կարիքավոր երեխաները, «Ջերմիկ անկյուն» կազմակերպության 18 տարին լրացած մտավոր եւ ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անդամները եւ Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու հովանու ներքո գտնվող անապահով ընտանիքների զավակները՝ գլխավորությամբ Արարատյան հայրապետական թեմի հոգեւոր սպասավորներ Գրիգոր քհն. Հովհաննիսյանի եւ Գրիգոր քհն. Գրիգորյանի:

Թվով շուրջ 250 մանուկների, պատանիների եւ նրանց ծնողների ու խնամակալների այցելության կապակցությամբ Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակն ու «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տունը կազմակերպել էին հանդիսություն, որին ներկա գտնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ կիսելով երեխաների ուրախությունը:

Հանդիսության ավարտին Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քհն. Մանգասարյանը, Գրիգոր քհն. Հովհաննիսյանը եւ Գրիգոր քհն. Գրիգորյանն իրենց խորին երախտագիտությունը հայտնեցին Հայոց Հայրապետին՝ հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի եւ հոգենորոգ տոների առիթով նրանց ուրախություն պարգեւելու համար: «Արեւներ» դաւանի սինդրոմով երեխաների աջակցության կենտրոնի պատասխանատու Գրիգոր քահանան մասնավոր շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ հանդիսության մասնակիցներին տեղեկացնելով, որ վերջերս Մայր Աթոռի կողմից Երեւան քաղաքում անհրաժեշտ տարածք է հատկացվել կենտրոնի գործունեության համար:

Այնուհետեւ ներկաներին իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շնորհավորելով գալիք տոների առիթով եւ մաղթելով լավատեսական ոգով հայացքն ուղղել դեպի նոր տարին՝ հավատքով, որ Աստված Իր առատ օրհնությունները կհեղի նրանց կյանքից ներս:

«Այս գեղեցիկ առիթով կուզեմ իմ գնահատանքի խոսքն արտահայտել այն ծնողներին ու խնամակալներին, որոնք սիրով, հանձնառությամբ, զոհաբերության ոգով եւ բարձր գիտակցությամբ ամեն ջանք ի գործ են դնում, որ մեր զավակներին ուրախություն պարգեւեն եւ լիարժեք կյանքի մասնակից դարձնեն նրանց»,– ասաց Նորին Սրբությունը՝ կարեւորելով նման կարիքներ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ուղղեց քահանա հայրերին, որոնք իրենց հովվական առաքելության մեջ մասնավոր ուշադրություն են դարձնում հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների եւ նրանց ընտանիքների նկատմամբ՝ իրենց աշխատանքով ջանալով զորացնել նրանց հավատը եւ լավատեսության ոգին: Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց նաեւ գեղեցիկ միջոցառման կազմակերպիչներին եւ մասնակիցներին:

Բարի Ամանոր մաղթելով բոլոր մանուկներին, ներկա ծնողներին ու ընտանիքներին՝ Հայոց Հովվապետը հայցեց երկնավոր Տիրոջից, որ սուրբծննդյան շնորհները զարդարեն նրանց կյանքի ընթացքը, եւ շարունակեն ապրել Աստծով զորացած: *«Իմացեք, որ եկեղեցին ձեր կողքին է եւ ձեզ հետ է: Ձեր քայլերը միշտ ուղղեք դեպի եկեղեցի, որտեղ օրհնությունն է, որտեղ հրաշքն է գործվում Աստծո միջոցով եւ հավատքի զորությամբ: Վստահ ենք, որ Աստված ձեր կյանքում նույնպես այդ հրաշքները պիտի կատարի»,–* պատգամեց Հայոց Հայրապետը:

Հանդիսությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց յուրաքանչյուր մանուկի:

Հրատարակվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում (2019)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել.

1. Ճարտարապետ, շինարարական արվեստի պատմաբան Լիպարիտ Սադոյանի «Մեսրոպաստեղծ հայոց գրապատկերների կազմության սկզբունքները» աշխատությունը,
2. Մկրտիչ Ա Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Դրախտի ընտանիք», «Պապիկ եւ Թոռնիկ», «Սիրաք եւ Սամուել» բարոյախրատական երկերի ժողովածուն,
3. Գրող, հրապարախոս Ռազմիկ Դավոյանի «Համատարած Թումանյան» մենագրությունը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին,
4. «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» մատենաշարի հերթական՝ Ի հատորը՝ «Ս. Էջմիածինը եւ հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների տօնակատարութիւնը 1912–1913 թթ.»,
5. «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» ժողովածուի երկրորդ հատորը՝ Մայր Աթոռի արխիվի նախաձեռնությամբ,
6. Վալերի Թունյանի «Ամենայն Հայոց Եփրեմ Ա Զորագեղցի Կաթողիկոս (1809–1830)» ռուսերեն աշխատությունը,
7. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական խոսքերի ժողովածուի Բ հատորը («Հատընտիր պաշտոնականք. 2010–2018»)՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 20-ամյակին,
8. Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի «Պատմություն Սուրբ Գրոց հայկական թարգմանության» աշխատությունը,
9. Սբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության (Նարեկ)» կոթողային գործը՝ Մկրտիչ Խերանյանի թարգմանությամբ (յոթերորդ վերանայված հրատարակություն),
10. «Աղոթագիրք, ճանապարհ ազատության»՝ նախատեսված ազատազրկման վայրերում օգտագործման համար,
11. Սբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության (Նարեկ)» կոթողային գործը՝ Մկրտիչ Խերանյանի թարգմանությամբ (ութերորդ վերանայված հրատարակություն) (փոքր ֆորմատի),
12. Սբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության (Նարեկ)» կոթողային գործը՝ Մկրտիչ Խերանյանի թարգմանությամբ (մեծ ֆորմատի),
13. Պողոս Պատրիարքի «Խրատի թանգարանը» (յոթերորդ հրատարակություն),
14. Վազգեն Առաջինի «Մեր Պատարագը» (արեւելահայերեն երրորդ հրատարակություն),
15. 2020 թ. սեղանի օրացույցը,
16. 2020 թ. պաշտոնական օրացույցը,
17. Гевонд вардапет Оганесян, Господи! отверзи уста мои, молитвослов, издание третье, исправленное,
18. Դեյվիդ Հորելլի «Պողոսագիտության ներածությունը»՝ անգլերենից Նշան վրդ. Հմայակյանի թարգմանությամբ,
29. «Հայոց վեհարանը» (կազմ.՝ Ասողիկ աբեղա Կարապետյան),
20. Հեթում արքայի ճաշոցը,
21. Երիտասարդի աղոթագիրքը,
22. Տ. Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու «Հայելի աստվածային շնորհաց»-ը՝ Լիլիթ Հակոբյանի թարգմանությամբ,
23. Արշակ եպս Խաչատրյանի «Որոնումներ» քարոզների ժողովածուն,
24. «Պատմական Տայք» (պատմություն, մշակույթ, դավանանք) գիտաժողովի հոդվածների ժողովածուն,
25. Հ. Սվազյանի «Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները սկզբնավորումից մինչեւ 8-րդ դարը ներառյալ» գործը:
26. «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան. Կոմիտաս վարդապետ (1869–1935)» փաստաթղթերի ժողովածուն:



ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 27.12.2019 թ.
Տպաքանակը՝ 1175